# Վարդապետության սերտում. Գնահատում 2. Ուսումնասիրության ուղեցույց

ԱԼՄԱ 7.11–13 – ՄՈՐՈՆԻ 10.4–5

## Մտապահեք հղումները և սուրբգրային հիմնական արտահայտությունները

Ծանոթ եղեք վարդապետության սերտման սուրբ գրության հղումներին և հիմնական արտահայտություններին: Ներբեռնեք և օգտագործեք Doctrinal Mastery բջջային հավելվածը, որը կօգնի ձեզ կրկնելիս:

## Մորմոնի Գրքի Վարդապետության սերտում. Ալմա–Մորոնի

| Սուրբ գրության հղումը | Սուրբգրային հիմնական արտահայտությունը |
|---|---|
| Ալմա 7.11–13 | «Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի»: |
| Ալմա 34.9–10 | «Անհրաժեշտ է, որ մի քավություն արվի, . . . մի անսահման և հավերժական զոհաբերություն»: |
| Ալմա 39.9 | «Այլևս մի գնա քո աչքերի տենչանքների ետևից»: |
| Ալմա 41.10 | «Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»: |
| Հելաման 5.12 | «Դա մեր Քավչի վեմի վրա է, . . . որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը»: |
| 3 Նեփի 11.10–11 | «Ես ենթարկվեցի Հոր կամքին, բոլոր բաներում, ի սկզբանե»: |
| 3 Նեփի 12.48 | «Եղեք կատարյալ, ճիշտ ինչպես ես, կամ ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է»: |
| 3 Նեփի 27.20 | «Եկեք ինձ մոտ և մկրտվեք իմ անունով, . . . որպեսզի դուք կարողանաք սրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին»: |
| Եթեր 12.6 | «Նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում»: |
| Եթեր 12.27 | «Եթե մարդիկ գան ինձ մոտ . . . այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»: |
| Մորոնի 7.45–48 | «Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է»: |
| Մորոնի 10.4–5 | «Հարցրեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս . . . [և] Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»: |

## Կիրառեք վարդապետությունը իրական կյանքում

Օգտագործեք վարդապետության սերտման առնվազն մեկ սուրբգրային հատված, որպեսզի.

- Բացատրեք, թե ինչ է Աստված խնդրում մեզ անել հավերժական կյանքին արժանանալու համար:

_____

_____

- Օգնեք մեկին, ով ցանկանում է իմանալ, թե ինչպես կարող է ամրապնդել իր վկայությունը:

- Բացատրեք Հիսուս Քրիստոսի առաքելության նշանակությունը՝ որպես մեր Փրկիչ և Քավիչ:

- Բացատրեք, թե ինչ կարող է անել Փրկիչը՝ օգնելու մեզ հաղթահարել մեր խնդիրները կամ գայթակղությունները:

Պատրաստ եղեք կիսվելու ձեզ վրա ամենամեծ ազդեցությունը թողած վարդապետության սերտման հատվածներով և բացատրելու, թե ինչու են դրանք այդպիսի ազդեցություն թողել:

## Հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները

Կարդացեք 5–12-րդ պարբերությունները *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում* (2023) «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնում: Խորհեք, թե ինչպես կարող եք օգտագործել հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները, որպեսզի օգնեք որևէ մեկին հաղթահարել իր առջև ծառացած խնդիրները կամ մտահոգությունը:



© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. 